Արձանագրություն N2

ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/21 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

Ք. Երևան,

19.12. 2022թ.
ժամը՝ 11.00

Մասնակցում էին՝
նախագահ՝ Տ. Ջիլավյան,
բացող անդամներ՝ Գ. Ջոհրաբյան,Ա. Առաքելյան
գնահատող անդամներ՝ Գ. Փամբուխչյան, Վ. Չիլինգարյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Դրամբյան,

Հանձնաժողովի նիստը վարեց նախագահ՝ Տ. Ջիլավյանը

---

1. Ընդունել ի գիտություն, որ 16.12.2022թ-ին կատարվել է հրավերի պարզաբանման հարցում: Առաջարկվում է հանձնաժողովին ուսումնասիրել հարցումը և տալ Պարզաբանում:

Ուսումնասիրելով պարզաբանման հարցումը Հանձնաժողովը որոշեց տալ հետևյալ Պարզաբանումը.

Հարցադրում 1.

Հարցը վերաբերում է 2-րդ չափաբաժնով ծեռքբերման ենթակա խմելու ջրին: Ըստ տեխնիկական բնութագրի՝ այն պետք է լինի բնական աղբյուրի մաքրազտված խմելու ջուր: Մեր ընկերությունը ևս գործում է դիսպենսերով օգտագործվող խմելու ջրերի շուկայում և հանդիսանում է մեր երկրի բազմաթիվ պետական և մասնավոր հաստատությունների մատակարարը: Պետք է նշել, որ մեր գործող հաճախորդների կողմից սահմանված մրցութային փաստաթղթերում նկարագրում նշվում է ոչ թե աղբյուրի բնական խմելու ջուր, այլ խմելու ջուր, որը ենթարկված է բազմաստիճան ֆիլտրացման և մանրէազերծման, հոսքագծային շշալցմամբ, համապատասխանում է սահմանված սանիտարահիգենիկ պահանջներին և ԵԱՏՄ գործող կանոնակարգերին:

Վերը նշվածը հաշվի առնելով խնդրում ենք պարզաբանել արդյոք Ձեզ համար հարկավոր է բացառապես բնական աղբյուրի խմելու ջուր, թե ընդունելի է նաև սեփական աղբյուր չունեցող մատակարարների կողմից մատակարարվող և գործող բոլոր նորմատիվներին համապատասխանող բարձրորակ խմելու ջրի մատակարարման հնարավորությունը:

Պարզաբանում 1.

Տեխնիկական բնութագրերում << Բնական աղբյուրի մաքրազտված խմելու ջուր>> գրելով Պատվիրատուն նկատի է ունեցել այն, որ Հայաստանի Հանրապետությունում բոլոր ջրերն էլ ի սկզբանե բնական աղբյուրներից են հոսում: Գտնում ենք, որ ցանկացած հնարավոր մասնակցի համար պարտադիր չէ սեփական բնական աղբյուր ունենալը և սահմանված սանիտարահիգենիկ պահանջներին համապատասխանող <<աղբյուրի մաքրազտված խմելու ջուր>> -ը համարվում է ընդունելի Պատվիրատուի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովը որոշեց հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի. | | |
| Նախագահ՝ | | Տ. Ջիլավյան |
| Անդամներ՝ | | Գ. Ջոհրաբյան |
| | | Ա. Առաքելյան |
| | | Գ. Փամբուխչյան |
| | | Վ. Չիլինգարյան |
| Քարտուղար՝ | | Կ. Դրամբյան |